գյուրին և բավական վաղ ներգրավվեցին նոր կարգերի ծավալման ոլորտի մեջ։ Դրան հակառակ ոչ միայն ձմեռանոցներում, այլև գյուղական տիպի բնակավայրերում թուրք բեգերը չէին խզել իրենց տնտեսական կապերը հասարակության հետ և մնում էին նրա մեջ միշտ ղեկավար դերում՝ լայնորեն օգտվելով նաև համայնական վարելահողերից և մանավանդ այն ընդարձակ արոտավայրերից, որոնք հատկացված էին գավառի foշվor տնտեսությունների մեծաքանակ հոտերին։ Մինչդեռ հայկական գյուղերի յայլաղնէրը շատ սահմանափակ տարածություն էին գրավում, թուրքերի ձմեռանոցները և գյուղերի լեռնային արոտավայրերը փովում էին հեռու ոչ միայն Բարգուշատի, այլև Մեղրի Գյունեյի (Արևիքի՝ նախկին Զավնդուրի) լեռնաբազուկների բարձրադիր գոտիում, ինչպես և ընդարձակ Ղարաբաղի հրաբխային բարձրավանդակի վրա, ուր բացի Սիսիանի գյուղացիությունից ամառվա ամիսներին բարձրացնում էին իրենց անասունը նաև Մուղանի դաշտի թուրք անասնապահները։ Նույնպես ընդարձակ էին նաև նրանց ձմեռային արոտատեղիները։ Թուրք բեգերի ոչխարն ու խոշոր անասունն էլ գյուղացիական հոտերի և նախիրների հետ միասին ընդհանուր հսկողության տակ, արածում էին այդ արոտատեղիներում։ Այսպիսի պայմանների մեջ թուրք բեգերն իրենց ապրուստը հիմնելով գլխավորապես անասնապահությունից ստացած եկամտի վրա, առավել, որ շուկայում բրդի և կաշվի գները շատ ավելի արագ էին բարձրանում, քան թե հացի գները, իրենց գլխավոր ուշադրությունը դարձնում էին մանր և խոշոր անասունի կազմի ավելացման վրա և կարողանում էին այդպիսով հոգալ իրենց ընտանիքների պետքերը, մանավանդ որ գերազանցորեն foշվor կենցաղով ապրող միջավայրում նրանց կուլտուրական պահանջները բավականին համեստ էին։ Այս հանգամանքներում բեգական տները գտնվում էին նյութական ավելի ապահով վիճակի մեջ, քան թե հայ ազնվական-կալվածատերերի տները, նույնիսկ այն դեպքերում, երբ խոշոր ընտանիքները բաժանվում էին ավելի մանրերի և իրենց մեջ էին բաժանում ընդհանուր հոտերն ու նախիրները։ Հայ ազնվական հողատերերը իրենց ապրուստը հայթայթելով գլխավորապես հողագործության արդյունքներով, տոհմական կալվածքների մանրացման դեպքում շատ սակավ դեպքերում էին կարողանում համայնքի համաձայնությունը ստանալ գյուղական հողերից օգտվելու և այդ միջոցով գյուղի ազատ հողերով լրացնելու իրենց հողային պակասը։ Համայնքը մեծ դժկամությամբ էր ընդունում իր մեջ ազնվական ծագում ունեցող անդամներին, որոնք արտոնություն էին վայելում գյուղական տուրքերի շատ կարևոր մասից ազատ մնալու և այդ դեպքում հարկերի ծանրությունն ընկնում էր միայն հարկատու գյուղացիների վրա։ Այնուամենայնիվ Զանգեզուրի հայկական գյուղերում, թեև ոչ այն չափով, ինչ չափով այդ տեղի էր ունենում Լոռիում, աղքատացած ազնվական ընտանիքները (օրինակ՝ Բեխում, Խնձորեսկում, Տեղում) ձուլվում էին գյուղացիական զանգվածի հետ և լուծվում նրա մեջ։ Գյուղատնտեսական արդյունքներով ապրելու անկարող այլ ընտանիքներն ուրիշ ելք էին գտնում ստեղծվող նյութական նեղ վիճակից։ Այդ ելքերից մեկն էր՝ անցնել առևտրի միջնորդների շարքը և գյուղացիական զանգվածից անջատվող դրամատիրական շերտի հետ միասին մասնակցել ներմուծվող և արտահանվող ապրանքների շուկայի գործառնություններին անձնապես կամ առևտրականներին դրամական միջոցներ տրամադրելով։ Նրանց այս մասնակ-